



ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ

Ե Ի

ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ

Ծ Ա Ղ Ի Կ Ե Ր Թ

Որ ամէն րան կը մեկացնէ, չլսածը կը պատմէ, չեղածը կը նկատագրէ, միօս կ'երեւակայէ, կը ձաղկէ եւ շարունակելի: Այս ամէնը կը հաւսէ, կը զստանայ կը խորացնէ ԳԵՐԳԻՍԻ ԹԱՐԱՍԵԱՆ Բ. ԼՈՌԻԹԻԻՆԵԱՆ:

«ԿԱՎՈՐՈՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ

— ԵՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ —

Ամէն մարդ զիսէ կուտայ մեզ քէ՛ Կավոօ Եւ Ծաղիկ միասին տա օտոյի կը նստին:

— Մենք Կավոօն ալ Ծաղիկէն ալ չենք կրնար զատել, կ'ըսենք, բայց զիներեկի ի՞նչ մը ամանցուցէ, որպէս զի երկուքն մէկանց բաժանուի գոյնի:

Երբ արձագոյն տեսնուի այս փափուկ խնդիրը նկատուիքեմք առնելու համար բացառիկ նիստ մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագիրը:

★ Կավոօ Եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոստի համար 80, վեցամս. եայ՝ 45 դրու: Կավոօ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Կավոօ Եւ Ծաղիկ միասին, տարեկան, Դաշտի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Կավոօ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Կավոօ Եւ Ծաղիկ միասին, Արտասահմանի համար տարեկան 25 ճր, վեցամսեայ՝ 13 ճր.: Կավոօ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ճրու:

★ 2րի քեր կուտանք կոր եւ զանազանք մանաւանդ: Բայց ամէն մարդ զիսէ արդէն քէ մենք փարայի համար չենք աշխատիր, — ո՛հ, եւ՛ լիցի, — այլ Հա՛յ ազգին համար:

ԹԻՒ 67 Տնօրէն Ռ. Սագաեան 10 ՓԱՐԱ

Հասցէ՝ Ղալաթիա, Գոթոյնյոյ խան թի

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 29 ԴԵԿՏ. 1908

زاغيك غزسى در عيله ده غلهده قورشولى خاندن نومرو ۷

ՀԱՅՈՒՆԻՆ ԿԸ ՀԱՄԲՈՒԲԵՆ...

Կ Ե Ց Ց Ե՛

ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ, ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Աստուած բանն յաջողէ Բարիքի Բոնկրէին, որ մեզի թուրքիացիներէն ըստ համար նոր երրորդութիւն մը բերաւ, որ եթէ ոչ Ամենասուրբ. զոնէ կը յուսայինք թէ Ամենազօրաւոր պիտի ըլլար:

Եւ չնորհիւ էնվէր ու Նիպոլի պէյերուն, չնորհիւ Ամէն Բիզայի Մեշվերէին, չնորհիւ վերջապէս Իզլէթ փաշայի (ի՛նչու չէ) Սահմանադրութիւնը եկաւ մտաւ թուրքիոյ մէջ:

Բայց կարծեցինք, արդէն մենք նշանաւոր անկախներ ենք, այո՛ կարծեցինք որ փրկուած ենք այլ եւս և «զի քո՛ է կարողութիւն և դորու թիւն և փառք յաւիտեանս յաւիտեանից. ամէն»:

Ի՞նչ կը մնար կոր որ ամբողջ թուրքիան յիմարանոյի մը վերածուէր. այնքան թաղ տուած էինք ինքզինքնին և հոգ չէինք տանիր որ մեր արդէն քիչ մը խելքը՝ զլուռնիս մնայ:

Մանաւանդ մենք՝ Հայերս՝ բոլորովին կապերը թուրքացած էինք և գետը չի տեսած մերկացուցած էինք մեր ոտքերը:

Չարմանալի է որ խելացի և խորհող Ազգ մը ըլլալու համբաւն ալ չինած էինք:

Հէ՛յ վախ այդ բոլոր համբաւները ջուրը ինկան, Յուլիս 11էն մինչեւ Երեսփոխանական ընտրութիւններու նախօրը օրուան մէջ, մեր բռնած զիրքին չնորհիւ:

Սահմանադրութիւնը եկածին պէս թուրք թերթերը չորս տողով լուր մը տուին թէ չէ, այլ եւս կարծեցինք թէ Անատուլի վեց նահանգներուն Տէր եւ Իշխան ենք, Սերաստիա կամ Վան Մայրաքաղաքնիս է և թագաւոր պիտի անուանուի... Ակնունին:

Այլեւ ինչ կարեւորութիւն ունէրսա կամ նա. չէ՞ որ Հայերն ալ իրենց թագաւորը ունէին, ինչպէս արդէն հինէն ի վեր կայսր մը ունին... Աւստրիոյ Յոսանց Նոգէֆը, որ «թաղաւոր Հայոց» տիտղոս մըն ալ ունի եղբր:

Ալ մոռցած էինք Յուլիս 10ը. երկր գոյութիւն չունէր այլ եւս. ամէն մարդ հայրութիւն էր մեզի համար եթէ նոյն իսկ անկախ մէկ հրամանով 300,000 Հայեր ջարդել տուող մը եղած ըլլար:

Ու սկսածք հաւերուրիլ: Ծա՛փ, չո՛ւփ...:

Եղբայրութեան, համերաշխութեան, Արդարութեան, Հաւատարմութեան ու Ազատութեան քարոզներ սկսած կարող մեր թուրք հայրենակիցները... ձայներնին ելածին չափ պոռալով:

Օրմանեանը մեկնած էր և Հայուն զլխուն նոր գայլի աւետարաններ կարդացողներ պէտք էին:

Իրր թէ բռնակալութեան օրերու մէջ քիչ մը քիչ քարոզ մտիկ ըրած ըլլայինք:

Ուր որ հանդիպեցան մեզի, կաւորչին զլուխները, Եէնի ճամբի հրապարակը, Երրորդութեան եկեղեցին, Թագսիմի պարտէզը, փողոցներու անկիւնը, Պապուլի վերջապէս ո՛ր որ երկու հայ տեսան խօսեցան ու խօսեցան, մինչեւ որ... Ահմէտ Բիզա Ատենապետ և կարգ մը Մուսթաֆաներ ու Նէմլի Զատէներ բերին նստեցուցին Խորհրդարանին մէջ, իրրեւ «Միլլէթ Հաքիմի»ներ:

Առ քեզի համբուրուիլ մը որ...:

Աւետարանին մէջ ալ ասանկ համբարի մը պատմութիւնը կար եւ մեղք որ ամէն օր եկեղեցին էինք և Բրիտանոսի մատնութեան պատմութիւնը կը լսէինք:

Համբուրուելով... մատնուեցանք:

Եւ տակաւ ամառուան ամիսները անցան. օդերը ցրտել սկսան. պաղութիւն մը՝ նախ Պաղքաններէն և յետոյ Անատուլի կողմերէն սկսաւ փչել. ամէն բան սառեցաւ. եղբայրութիւնն ու համերաշխութիւնն ալ որոնք շատ փափուկ բաներ էին... սառիլ սկսան:

Թուրք թերթերուն մէջ, երբ առջի օրերը մեղրով ու շաքարով կը խօս-

ուեր Հայերու մասին և անոնք «Էրմէնի Վաթանտաշարմըզ» էին, աստիճանաբար այդ ամէնը ջնջուեցան թուրք թերթերու սիւնակներէն:

Ինչ անցած դարձած էր. արդեօք Հայերը մէկէն ի մէկ չնորհազո՛ւրկ եղած էին:

Ո՛չ. որովհետեւ կովը մեռած և կաթը հատած էր:

Ո՛վ կ'ըլլային այլ եւս Հայերը. ո՛վ էին կեանքները, որոնք դեռ երէկ բանտերու ու քաղաքներու մէջ կը սառնէին եւ այսօր ելեր հաւասար կը նկատեն ինքզինքնին՝ թուրքին հետ:

Եւ իրաւ ալ խախտ էինք:

Խախտի պէս հաւատացինք ամէն բանի. բոլոր կեղծաւորութիւնները անկեղծութիւններ նկատեցինք և քապալա քեչիմ եղանք անոնց:

Խեղճ Հայ...:

Ջարդեր են եղեր քեզ. Բարիքի Բոնկրէին գաղափարը քու՛նաչակցականներու է եղեր. տանջուեր ու թալանուեր եւ եղեր տարիներսւլ, թուրքիոյ բանտերն ու խաֆէները քեզի համար ստեղծուած են եղեր. ի՛նչ կ'ըլլայ ասոնք պատճառներ են որ թուրքիոյ հետ դո՛ւն սլ հաւասար ըլլան:

Ասանկ հաւատարութիւն չի կայ թուրքիոյ մէջ. ասանկ սահմանադրութիւն ալ չի կայ. ասանկ համերաշխութիւն երբե՛ք և եթէ վայրկեան մը կարծեցիք և ձեռք մտքէն անցուցիք այս կերպ բան մը, չուտով հեռացուցէք ձեր մտքէն:

Որովհետեւ...:

Մտիկ ըրէ՛ք:

★ Պէշիքթաշի մէջ Բրիտանոսայ պատանի մը Թոտորի՝ կը սիրահարի թրքուհի մը, Պէտրիէն:

Բրէական յանցանք մըն էր այս բանը Իսլամ խուժանին աչքին և ամենաբնական արարք մը, բոլոր քաղաքակրթուած ու մարդու կարգանցած աշխարհին առջեւ:

Բայց իսլամ խուժանը անանկ բան մտիկ չընէր և Թոտորին կը սպաննէ, սա միակ յանցանքով որ իսլամ կին մը իրեն սիրահարուած էր:

Ու թուրքիա, սահմանադրական թուրքիան. կը շարունակէ ապրիլ եղբայրութեամբ և ազգերու համերաշխութիւնն ու «ասայիլը պէրքէ-մալը» կատարեալ են:

Ու օրերը կ'անցնին երջանիկ:

Եւ օր մըն ալ, անցեալ շաբաթու մէջ, այլեւս բոլորովին կը համոզուինք կոր որ թուրքիա իրապէս սահմանադրական եղած է, բոլորս ներք կանոնաւորուած և աւազակները հալածուած են. հարստահարութիւններ չկան այլեւս և միայն ատեն ատեն զինուորական տուրքի տեղ նպաստի գումարները կը յափըշտակուին:

Ի՛նչ պատահած էր. արդեօք Բոմիդէին տեղ Սապահէտինի կուսակցութիւնը անցած էր. արդեօք Խորհրդարանը ի նորո՞յ կազմուած էր և գաւառներու բոլոր հարստահարիչ ու կաշառակեր վալիները ու գայմադամները պաշտօնա՛նկ եղած էին. ո՛չ սա և ո՛չ ալ ան, այլ՝

Օրոգտի Պագ վաճառատան առջեւ թուրք մը Հայու կին մը պաշտած էր երկու երեսներէն:

Հայ երիտասարդ մը պաշտպանել ուզած էր և ի վարձ իր այս ասպետավայել արարքին, քիչ է մնացեր որ այդ թուրք երիտասարդին ընկերներուն կողմէ ծծծ մըն ալ պիտի ուտէ եղբր...:

Տեսա՞ք հիմա, տեսա՞ք և համոզուեցա՞ք որ թուրքիան այլեւս բարեկարգուելու ճամբուն մէջ մըտնած է...:

Հաւատարութիւն ըստածը արդէն ասանկ կ'ըլլայ... Թուրքիոյ մէջ և ասկէ աւելին երբ կը սպասենք. կամ այն է որ նոր Զեյթունայէն նոր գաղթած ենք հոս և կամ թէ՛ հաւատարութիւն ըսելով պան պաշխա բան մը կը հասկընանք մենք:

Յոյն մը թրքուհի մը սիրահարուած էր և հաշիւը կարգադրուելու և առնելիք տալիք չմնալու համար, պէտք էր որ թուրք մըն ալ համարուէր Հայունի մը:

Արդ՝ մենք ինչ ընելու ենք:

Պէշիքթաշի թուրք խուժանին ըրա՞ծը պիտի ընենք:

Հա՛րկ է որ տեղնիտեղը սատկեցնենք այդ անբարոյական և լկտի թուրք երիտասարդը որ, մայրաքաղաքի փողոցներուն մէջ, բազմամարդ քառուղիի մը առջեւ, աչալուրջ ոտիկաններու ներկայութեան և Հիւսէյին Ճահիտի ու Թագվիմը վազայի քիւն տալ... հայունները կը համբուրէ:

Իրոք ինչ կ'ըլլար հայ երիտասարդի մը վիճակը, երբ գտնուի մեծ զանազանութիւնը անոր հետ։

Կամ այն է որ 15 տարի բերքաւորութեան կը դատապարտուէր և կ'ըլլար ձերբակալուած հրահանգիր մը կը հասնէր իր մասին եթէ փախած էր։

Ուստի ինքնաբերական, Անմէտ Ռիզա, Հաւանքի ծախիտ, Սամի փաշա, Գալիֆի և բոլոր խումբը շրջիկն թերթերու ինչ կը մտածեն արդեօք։ Գոցէ կը դատապարտեն այդ թուրք լիտի երիտասարդը որ, ոտնակոխ ըլլաւ և հաւատարմեան սկզբունքը... երկուքի տեղ մէկ համար գործադրուի։

Եւ մէկ մըն ալ թաղիներ վազաւ մեղի հաւատարմեան ու կլլեցնել կ'ուզէ կոր որ Անատոլի մէջ «Ասպիւր» պէր քէմալ տըրքէ թէ որ և է թալանի, հարստահարութեան ու գողութեան դէպք չէ պատահած։ Այսքան վրան բաց հերքում տեսնուած բան չէ։

Երբ մայրաքաղաքի փողոցներուն մէջ կրնան համայն կը գողնան ցերեկ ատեն ու լոյս աչքով, ալ ինչպէս կ'ուզէ որ Անատոլի խորքերուն մէջ, ո՛չ թէ մէկ համբոյր, այլ ամբողջ պատիւներ չը գողնան։

Գ. Բ. ԲԱՐԱՍԵԱՆ

ՀԱՃԻ ՊԱՊԱՅԻՆ ԱՆԿԻՆԸ

Մեծագետն խմբագիր տէր.

Տաճկեղբար մէտէլ մը կայ օր կ'ընէ. «Եւրոպայի չօք չէնէնէն սարկուսաք տառը վերի»։ Էս ալ պիտի զգուշան մէկ պիտի կրելով լսալը օտանտորի չանեմ տէյի աս հեղուս պոլորովին ֆարսիլի տիւտիւկ մը պիտոր չալեմ։ Մալսուսէն ինծի համար պատուական ֆոնօկրաֆ մը զրկած է. կոթը պիտոր տարցունեմ մտիկ արեք, նայինք մէջէն ինչ կը ելլայ։ Հազար էղէք. ահա կը պալլայէ... «Կրր... զըպպ... տամ... տամ... տամ... տանկ... տանկ...»

«Աս—տո՛ւր... Սէլամ—տո՛ւր. բահաթ—տո՛ւր»։

—«Մօ՛ Մանուկ, օղու, ատ ինչ ծայներ է որ կուգայ»։ —«Հայրիկ, ասկերը բարեւի կայնեցաւ սահաւնադրութիւնը պիտի կարգացուիչէ՞ որ խորհրդարանի բացման օր է. Ժողովուրդը ուրախութեամբ կը խայտայ»։ —«Օ՛խ, պէրանդ պագնեմ, այս օրերն ալ պիտի տեսայինք»։

—«Վա՛յ եամա՛ն, պու նէ՞ գալապալըք, պէ՛ ինչէ սափլալաճաք եէր գալմամը»։

—«Բա, Հայկանուշ, խուզիւ, ձեռքէս լաւ բռնէ օր ոտքի տակ չը մնաս»։

—«Վառտա՛, եօլ աչըն, արապա կէլիօր»։

—«Վրէ Մանուկ, Եանգօ, Եօրկի, Էլաւո, մոռէ, Էլաւո. աֆթօս Արմէնոս ինչ գալօս ա՛նթօփօս»։

—«Մարտիկ ամմու, սա Հոռոմը ինչու կը պոռայ զըր քէլի պէս»։ —«Ի՞նչ ինչուդ պէտք է, աչքիդ առջեւ նայէ որ թէ՛ Թալալա չերթաս»։

—«Միմիթի... Թաղէ Թաղէ սիմիթի»։

—«Գարըլ պուզըլը երեքէք ֆէրահլանարըր Գարաբուլադ սուլու, գատէնի պիր մէթալիկէ»։

—«Հէր նէ ալըբան ալթմըշ բարայա. կէօմրիւք մալը ալթմըշ բարայա»։

—«Կեցցէ՞ սահմանադրութիւն, կեցցէ՞ ազատութիւն, կեցցէ՞ միութիւն և եղբայրութիւն»։

—«Հէ՛յ, եա՛նու այաղըմա պասըյօրսուն, կէօղիւն քէ՛օր մի»։

—«Ականջ մի կախեր, հէյ կիտի, ուղածին չափ թող հաջէ. այս օր ազատութեան օր է. օտքերս ձէպիս մէջ չի պիտի դնեմ ես»։

—«Ազա՛ն Աստուած այն օրից երբ հաճեցաւ շունչ փչել»։

—«Մա՛, քիչ մը սուս կեցէք օր լսենք ինչ կ'ըսեն նէ՛, այ օղու»։

—«Հա թամամ, իլթէ ասիկա պալաւ էր. սա մատմաղէլ օլաւըման ալ սիմիթիին թապալային խրտար շարխայովը առջեւ խաղալովը բաւ ելլէնի պէս. հիմա նէ կը տեսնանք նէտէ կը լսենք»։

—«Նաշաւըն էրմէնիլէր»։

—«Կեցցէ՛ն յեղափոխականներ»։

—«Կեցցէ՛ն երիտասարդ թիւրքեր»։

—«Օ՛յթ... օ՛յթ, քիչ մնաց որ թախ վրան պիտի տրվորտէի, սա սատկիլիք սե շունին»։

—«Դա՛, վո՛ւյ Իսկուհի տուտու, դու՛ն ալ էկար էն սօնու չըսես Սահմանադրութեան մարդ չը մնաց հոս թափեցաւ»։ —Հէլպէթտէ. Կամպէրիլ տիւտուս օլմազ՝ կ'ըսեն. —«Բա, ան չէ ամմա, լսեցի՞ր. Օր. Հացիլը ճամբու գրած են, Ամերիկա կ'երթայ, Սաքրամէնթօյիլին հետ ամուսնանալու»։ —«Բա աս Սաքրամէնթօյիլին ո՞վ է»։

—«Գօլ աղասի է եղեր Ամերիկայի պէս տեղ մը, ինչ բարձր պաշտօն. քա, ուրկէ՞ լսեցիր»։ —«Թերթերուն մէջը կարդացի. Հա՛ն Պապան գրած էր»։ —«Մանիկ հանրմ խօսքը արանիս, քեզի պան մը ըսեմ. աս Հա՛ն Պապային ալ գլուխը գալիք մը կայ. ամէն գաղտնիք դուրս կը հանէ»։ —«Աւրկէ ալ կը փոզէ այս լուրերը չես գիտեր»։

—«Թէլիլը հեռագրիներ ունի եղեր կ'ըսեն ալխարհիս ամէն կողմերէն»։

—«Տույտուն մը Անաստաս, պունտան սօնկրա ուրում, էրմէնի, ճըֆըթ, թիւրք հէփիմիլտէ գարտալ օլաճաղըլ տէյօրլար»։ —«Հէլպէթ, պէնտէ իսիթտիմ էօյլէ պիր սէյ ամմա, աղլըմա գառսի կէլիօր. ձունքի նէ թուրքլար նէ տա եախուտիլէր ինանի պիզիմ Սթալօղա վէ կ'վանկիլօնա. էրմէնիտէն հից գաւտաս ձըգաւ մի»։

—«Շէքէէր կիպի Ամասիա էլմասը, օղգասը քըրք փարայա»։

—«Գարըլ պուզըլը լէմօնաթ»։

—«Ասդին դարձիր մէյ մը՝ սա թիւրք կիսկներուն նայէ, Հոռոփիկ տուտու, էն սօնու սայմանադրութիւնը ատոնց եարամիլ եղաւ. երեսին առանց եալմախի դուրս ելած՝ հոյտըր, հոյտըր կը պտըտին, և եթէ ասկէ վերջ ջանէլ երիտասարդները պիտի պիտի տուգալի մէջ չգնեն նէ՛ թող կուլուսա օրթները ուտեն»։

—«Ալլահ էքպէր, Ալլահ էքպէր, Լա իլահէ իլ Ալլահ»։

—«Բա, կէս օր եղաւ, լուր չունիք, էլի մեղի երթանք, ճաշը միասին ընենք. հէմ կուտենք, հէմ ալ կուչտ մը կը խօսինք»։

—«Շէնըլլաս, չէն մնաս բայց չեմ կրնար գալ. Հա՛ն Գրիգոր Մանուկ աղան հետ մեղի պիտի գան մեր պատրիարքին աղերսագիր մը պատրաստելու որ Վանի և Մուշի սովետներուն օգնութիւն մը գրիկէ. Ձէյթուն ալ կ'ըսեն չափ խեղճութիւն կայ եղեր, հէմէն հէմէն միտքէս պիտի ըսեմ, կրողը տանի այս տեսակ սայմանադրութիւնը որ հայրենիքի խեղճութիւնը վերցնելու միջոց մը չի գտներ»։

—«Ինչ որ է. Աստուած ողորմած է. հարկաւ անթի չի մնար»։

—«Կրր գրր»։ — Բան ըրր զըպպ»։

Ազգիս դուրսանէ ՀԱՃԻ ՊԱՊԱՅԻՆ

ԲԵՄԻ ԴԵՄԵՐ

ԿՈՎԼԱՍԱՆԱՅ ԽՈՒՄԻՆԸ

Ա. ԱՌՄԷՆԵԱՆ

III

Կովկասահայ խումբի Ամնաւորը երբորդութեան՝ Որդին Աստուածը։

Սիրուն, աղւոր աղայ մը, որ առաջին անգամ երբ տեսնես կը կարծես թէ եւրոպական մեծ քաղաքի մը մէկ անդամն է։

Առմէնեան այն է Կովկասահայ խումբին մէջ, ինչ որ է շարժանական ճիւղ շարժանի մը համար. վերցուր Առմէնեանը՝ Կովկասահայ խումբէն և շարժանեանը՝ շարժանեան և կ'ուսնես և կ'սկիսկատար բան մը։

Ճիշդ Բարիկի դերասանն է Առմէնեան. դուրսի, անկողն, շէնչող և համակրելի։

Տեսնուէ՛ անգամ մը հետը և գրաւ կը դնեմ որ երկրորդ անգամուն զայն կը սիրես ամենահին բարեկամի մը պէս։

Երբեք չի նմանիր մեր կարգ մը դերասաններուն, որոնք Աստուած ստեղծած է կօշկակարութեան, լուսարարութեան և չիմաճիութեան համար և բաղդին մէկ կատակովը անոնքն գաղտնի տեսնուած են... քեմիլի վրայ։

Երբ ուրիշներ տառնոց մը իսկ չեն զոհած բեմի սիրուն, Առմէնեան զոհած է իփիլի պէս մականունը մը և... հազարաւոր ոսկիներ։

Բայց այս զոհողութիւնը սուղի նստած չէ իրեն. ընդհակառակը։ Պապային կարմրուկ ոսկիներուն ու «ճիւլախոտի ծանօթ վաճառական» տիտղոսին տեղ չահած է համբաւ և... Տիկին Առմէնեանի պէս շնորհալի կին մը, որ պէ՛տք է ըսել թէ՛ Առմէնեանի համար... վիճակահանութեան gros lotն է։

Այսօր Առմէնեան սիրուած դերասան մըն է և ծանօթ է Կովկասէն մինչեւ... Բարեբրդ։

Մինչդեռ իբրեւ ծախսի վաճառական՝ մէկ մը Անվէրսի մէջ՝ ինքեան պիտի ճանչնար զինքը և մէկ մըն ալ Ռիմի մէկ քանի... խօշմոյսներ։

Իր բեմական կարողութեան մասին բան մը չպիտի ըսեմ. Թիւրք գաղտնիք զինքը Շիլլերի աւագանիներուն մէջ՝ իբրեւ «Երանայ»։ Քրեմոնայի վիճակագրին մէջ իբրեւ «Միլիպպօ» և «Պատուի համար» մէջ իբրեւ «Սուրէն» և անկէ վերջը քովս եկէք։

Առմէնեան ո՛չ միայն կարող է իբրեւ դերասան, այլև կարող է նաեւ իբրեւ հայր և ունի չորս հասփոքրիկ Առմէնեաններ։

Հոս ուրիշ մագիստր չունիմ ընելիք. բայց եթէ մագիստր որ օր մը կաղմէ թատերական խումբ մը միմիայն... իր սեփական ուժերով և այլ խումբ կոչուի Առմէնեան և Որդիք թատերախումբ։

Մեր սիրելի պաշտօնակիր՝ Բիւրանդ Բէյեան այս սիրտին հետեւած է և գտնուելու առիթներ չունի... ընդհակառակը։

ԸՆԵՐ ԿԵՆՈ

ԻՆԼԱՑԻ ԴԱԻԹՆԵՐ

Արդէն անխելք Դաւիթ չըլլար. անպատճառ Դաւիթները խելացի կ'ըլլան... Դաւիթ Մարգարէին պէս։ Արդ մեր մէջ ալ այսօրիս սունկի պէս բուսան կարգ մը ինչացի Դաւիթներ, որոնք չնայելով որ զեռ տասը փարա վաստկելու ճամբան չեն գիտեր, ելեր առաջարկներ կ'ընեն Հայաստանի մեր եղբայրներուն օգնութեան հանելու համար։

Գո՛նէ երես ելելիք բաներ բլլան առաջարկները։

Գո՛նէ, կարելի՛ ըլլայ գործադրել։ Ես ալ եթէ կ'ուզէք ամէն օր ձեզի նոր նոր, խելքէ մտքէ չանցնելիք առաջարկներ ընեմ թուրք Սահմանադրութիւնը հաստատուն հիման վրայ դնելու համար, քանի որ... քեմիլի չիտիլ, օն փարա կը պոսան։

Բայց խնդիր է թէ ընելիք առաջարկութիւններս կարելի՞ է գործադրել։

Ապահովարար ո՛չ։

Օրինակի համար, պէտք է թուրք կառավարութիւնը հիմէն փոխել, սկսելով ամենաբարձրէն մինչեւ ամենացածր։ Այս այնքան կարելի է, որքան կարելի է Արախամ Այվազեանին ըսել որ Շիրվանշատի «Պատուի համար» մէջ... Սուրէնի դերը կատարէ։ Դուցէ, հրաշքները անպակաս են. այո՛ գուցէ Արախամ Այվազեան օր մը մէկէն ի մէկ... Առմէնեան մը դառնայ, բայց թուրք կառավարութիւնը իմ առաջարկած իս պէս... անկարելի է։

Արդ մտիկ ըրէք մեր խելացի Դաւիթներէն մէկուն առաջարկը։

Կ'առաջարկէ որ հայ սովետներուն օգնելու համար, բոլոր Հայերը չաճիլուին։

Հրաշալի՛ առաջարկ։

Տեսա՞ք. սո՛ւտ եմ երբ կ'ըսեմ թէ՛ խելացի Դաւիթները շատ են մեր ազգին մէջ։

ԾԱՂԻԿ-ԿԱՎՈՇՈՒ

ՎԵՐՈՒՄ ԿԱՎՈՇՈՒՄ

ԿՏՐՈՆ ԹԻՒ 22 ԻՆԿ. 29

ՅՈՒՆԻՎ. 15Ի (Ը.Ե.) ՎԻՃԱԿԱ-
հանութեան համար մասնակցե-
լու իրաւունք:

Անա' քսան (20) Էմիլիէի Թիւերը

25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212379
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231

Չածիւրինք հէ' :

Այն ատեն այդ խելացի Դաւիթը
կ'ուզէ կոր որ ամբողջ Հայերը...
վարդապետ կամ քահանայ ըլլան:

Իբր թէ արդէն ունեցածնիս չէ'ր
բաւեր:

Այն ատեն ո'վ դու խելացիդ
Դաւիթ չառաջարկէս նաեւ որ տունի
վարձը չի տանք, փողոցները պառ-
կինք. մերկ պտտինք. չի' ծխենք.
չուտենք. չի' խմենք և փոխանակ չո-
գենաւ. նստելու քայելով անցնինք
Սկիւտար կամ Դատարդի:

Ասո'նք ալ առաջարկներ են և
միլիոններ կը գոյանան եթէ իրա-
գործել տաս:

Բայց խօսք մը եթէ կը հասնի:
Կարելի չէ' որ սնագամ մը մինչև
Աղբ. Հիւանդանոց կրթաս և ինք-
զինքդ սօքթ. Պօղոսեանի խնամք-
ներուն յանձնես քանի մը օր:

Աղբին օգտակար ըլլալը լաւ բան
է. բայց մի' մոռնար որ մարդ նախ
պէտք է ինքզինքին օգտակար ըլ-
լայ... խելքը գլուխը գլուխը բե-
րելով:

Այս ըսածս կրնաս ականջիդ օղ
ընել...:

ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԻ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԱՂԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՝

Արէլեան Արմէնեան խումբը ուր-
քաթ գիշեր ներկայացուց ռուս հե-
ղինակի մը «Գարնանային հեղեղ»
անուն տաճար: Թատրոնը աւելի լե-
ցուն էր և կարգ մը չարամիտներ
որոնք նախանձելով կովկասեան կա-
րող իտալիէն յաջողութենէն, մուր-
քսել ուղած էին- չը կրցին իրենց
սպասած արդիւնքը ձեռք բերել:
Մեծ յաջողութեամբ ներկայացուե-
ցաւ խողը և Տիկ. Արմէնեան, Ա-
բէլեան, Ոսկանեան, Ազեան, Տիկ.
Պուրտխան ու Բէրդիան յաջող գե-
րակատարութիւնով մը անգամ մըն
ալ փայլեցուցին իրենց իրական տա-
ղանդը: Իսկ մեր սիրելի բարեկամը
Պ. Արմէնեան, Փրանսերէն յաջող և
անթերի արտասանութիւնով մը ար-

տասանեց Գօթի «Դարբիններու գոր-
ծադուրը»: Բայց ժողովուրդէն չա-
տեր «Գարնանային հեղեղը» երբ ի-
նացան կը սպասէին որ բեմին վրայ
գետակ մը հոսէր. մինչդեռ ո'չ իսկ
ափ մը ջուր կար, Պ. Ոսկանեանի
սիրտին մէջ բռնկած հրդեհը մարե-
լու համար: Այս իրիկուն «Արցուն-
քի հովիտը»ին գացէք. բայց չէ'
յանձնարարելու պէտք չկայ:

Տօքթ. Տաղաւարեանի դէմ ձեռ-
բակումն հրամանագիր հանուեցաւ:
Ի'նչպէս յայտնի է, Սուլթանին հացը
ուտող այդ երեսփոխանը... Եղիպ-
տոս փախած է, կ'ըսուի:

Սէլավիլքի արարողութեան ներ-
կայ գտնուող զինուորական վարժա-
րանի ուսանողները մերժեցին պա-
լատէն իրենց հրաժեցուած պիւսկիւն
ուտել և այլն: ԱՖէրի'մ ուսանողներ.
դո'ւք մարդ պիտի ըլլաք:

Քօմիդէն այլ եւս համը փախ-
ցնել կոկիւր. ամէն բանի կը խառ-
նուի և երբ մարդ մը ամէն բանի կը
խառնուի, այդ մարդը օր մը իր
յարգը կը կորսնցնէ:

Մեր Տէր Յակոբեանը անակացե-
ր է և միլիոն ոսկի բացով, Մենք որ-
չափ որ գիտենք մեր սիրելի Տէր
Յակոբեանը այլ ոչ թէ չորս միլիոն
ոսկի չորս միլիոն փարա իսկ չունի:

Հիմա այլեւս Թուրքիոյ մէջէն
բռնակալութիւնը վերցաւ և Ռու-
սիոյ մէջ գնաց հանգչեցաւ: Մենք
ալ կը կարծէինք որ Ռուսիա մարդ-
եղեր է: Ընդհակառակը մարդ չըլ-
լալէն դատ կամաց կամաց մարդ-
կութեան տեսրակէն պիտի սրբեն
կարծեմ: Այսօրեա լուրը Դաւիթի-
ցականները սկսած են ձեռնարկել:
Ե'ն ուրեմն կ'երեւի նոր պիշաւ մըն
ալ կ'ուզես որ բերեն դուրսիդ, ո'վ
Ռուսիա: Բայց այս անգամ կը
վախնամ որ այդպիսին այնքան ուժ-
գին ըլլայ որ... զլուխդ տանի:

Հիւանդանոցի տնօրէնութիւնը,
Թուրքիոյ մէջ Սահմանադրութիւն
մտաւ ըսելով, Հիւանդանոցէն ներս...
Հրէուհիներ սկսած է մտցնել և այս
օրերս հայ հիւանդապահուհիի մը
տեղ հրէուհի մը բերեր է, որ ուրիշ
առաւելութիւն չունի եղեր, բայց
եթէ չափազանց գեղեցիկ ըլլալը:
Ա'ս ուղ աղգեբուն համերայնութիւն
ըլլալու է. ամէն պարագայի մէջ
Հիւանդանոցի դեր-տնօրէնը ի'նչ կը
խորհի այս մասին:

Թուրքիա ասկէ վերջ որոշած է
աւստրիական, իտալական, պուլկա-
րական, գերմանական, հելլենական
և ֆրանսական ապրանքներուն դէմ
պայքօթ մղել: Այս հաշուով Թուր-
քիա պիտի ստիպէ որ բոլոր Թուր-
քիա բնակողները մերկ պտտին:
Ամէն բանէ երբ բարիք մը կը ծնի,
բնականաբար պայքօթէն ալ կը ծնի
բարիք մը և ամէնէն հաճելի բարիքը,
ինչպէս պիտի տեսնէք... եթէ այս
պայքօթը իրականանայ:

Հոռոխ նորընտիր դեսպան Հագգը
պէյ, բաւական ուղարկու խառնի
ոտը ունի եղեր. զնաց չի գնաց...
Իտալիա վիլի սիսաւ: Ամա'ն Հագգը
պէյ տեղը ամուր նստէ. սախըն հա'
Պոլիս չը վերադառնաս:

Ճարտնական անանուն ընկերու-
թիւն մը 101 տարուան պայմանա-
ժամով իր վրայ առաւ Պոլսոյ փո-
ղոցներու ցեխերուն շահագործումը՝
պայմանաւ որ արտածուած պարա-
գային մաքսէ դերձ մնան ցեխերը:

Պ. Վահրամ Փափագեանէ աւ լի
Օր. Էլիզ Պիլնէմէնեան գիւղեօռ-
ըրած է Ռոտտոթոյի մէջ: Փափագ-
եան փիւշման եղած է որ այդքան
գեղանի գերասանուհի մը տարած է
իր հետ:

Թագվիլը վագաս իր պաշտօնը
այլեւս լիուրի չը կատարեր. ինչո՞ւ
համար Ատանայէն գրուած կարգ մը
բռնակալական լուրերը, անմի-
ջապէս չի հերքեր: Իր գոյութիւնը
հերքումներ գրելուն մէջ կը կայա-
նայ և եթէ չի հերքէ... կայո. կա-
ռավարութեան աչքէն կ'իյնայ: Օ ն
ուրեմն. հերքէ' տեսնենք... սայիջը
պիւր փեւաջ ջուր է:

Վարձու կառքերուն սակացոյց
մը պատրաստուեցաւ, կարծեմ: Այդ
սակացոյցը չի գործադրուեցաւ կը
կը կարծեմ: Այդ սակացոյցը գոր-
ծադրուելիք ալ չունի կը կարծեմ:
Արդէն Թուրքիոյ մէջ ամէն բան ա-
սանկ կ'երթայ կը կարծեմ:

Արծիւ ժողովրդական գրաւմա-
ռանոցին մէջ բաւական թիւով «Հայի
խնդիր»անուն գրքէն կայ: Արծիւ Տէր
և Տնօրէնի'րը որոշեցին այդ գրքերը
սովեալ դաւառները զրկել, որպէս
զի անօթիները այդ գրքերը կտր-
դալով կարենան քիչ մը իրենց անօ-
թիւնը անցնել:

«Երեսնամեայ Հայաստան» թերթը
հուսատի աղբիւրէ կը տեղեկանա որ
«Ա. Ունեանի, Յ. Թաւաշեանի և
Ա. Արիթարի արիւնը խմող Ոճրա-
գործ-Դաւաճան խմբակը, Նիւ-Եօքի
Հայ հարուստներուն դարձեալ կարմիր
նամակներ զրկելով՝ մահուան սպառ-
նալիքի տակ՝ հագարաւոր տօլարներ
պահանջած է... իր պատրաստած
«Ապստամբութեան Յատագագիծ»ը
յաջողութեամբ գործադրելու համար:
Այս «Տօլարարձի Խմբակ»ի պե-
տեր իրեւ Խիւիէր դրամաշորթներ.
սպառնական նամակին տակ աւել-
ցուցած են «Յիշեցէ՛ք ԹԱՆԻՇԱՆ-
ՆԻՇԱՆԸ» խօսքերը և դրամը յանձ-
նելու համար ցոյց տուած են «Սեաց-
րէքեան»ներու հասցէն, երեւի կամ
այդ մարդոց «մաքուր» սնունը
«պղտորելու» եւ կամ թէ' կողո-
պտած հաւասարապէս փայ ընելու
կանխադրուածով: Ընդ առաջողը
ի'նչ կայ սիրուն քան զանձնալի եղ-
բայր անուն:

Աղգ. Երեսփ. Ժողովը գումար-
ո' յաւ ուրբա' օր: Բայց ըսողսք

ալ կային որ չգումարուեցաւ: Արդ-
յայտնի չէ թէ գումարուեցա՞ւ թէ
չգումարուեցաւ: Ամէն պարագայի
մէջ եթէ միայն Խորհրդարան գալով
աթոռներուն վրայ նստիլը նիստ
գումարել է. այն ատեն ուրբաթ օր
ալ ըսել է նիստ գումարեց Աղգ.
Երեսփ. Ժողովը: Ամէն պարագայի
մէջ «գումարուե'լ թէ չգումարուել»
այս ի'սկ է խնդիրը:

Ժամանակի խմբագրապետը օր-
ուան հերոսն է: Մարդը փեռայի է
եղեր և մենք տեղեկութիւն իսկ
չունինք եղեր: «Արիւն պէտք է Թա-
փենք» կ'ըսէ հայ կնոջ մը համար-
ուելու դէպքը պատմելէ ետքը: Եւ
ո'վ դարմանալեացս, այս ամէնը
Քասիմին գրիչէն է որ դուրս կ'ել-
լեն: Ո'վ ժամանակ, ո'վ բարք:

Հիւանդանոցի տնօրէնութիւնը
այս տարի կաղանդի սեղան չպիտի
տայ եղեր որքանուն, կեցցէ՛ որբա-
սիրութիւն: Կ'երեւի աս ալ Սահ-
մանադրութեան բարիքներէն մէկն է:

Սահմանադրութիւն կա'յ թէ
չկայ: Ունեւը կ'ըսեն թէ կա'յ, իսկ
ոմանք ալ հակառակը կը պնդեն:
Ամէն պարագայի մէջ բան մը կայ
Թուրքիոյ մէջ որուն անունը Սահ-
մանադրութիւն դրած են: Հիջ եօզ-
սան հիջ ճիւր:

Պալքաններու մէջ գտնուող «Կա-
ցութիւնը» բաւական ծանրացած ըլ-
լալով, որոշուեր է մաքսէն քանի
մը հարիւր հատ ուժեղ բռնակիր-
ներ զրկել Պալքան և այդ ծանրա-
ցած կացութիւնը վեր առնել: Ա-
սիկա ալ մեր գործնական դիւանա-
գիտութիւնն է:

Պարսից Շահը շնորհաւորեր է
Սուլթանը՝ Օսմ. Երեսփ. Ժողովին
բացման առթիւ: Մնացի'նք. մնա-
ցի'նք. ատոր շնորհաւորութեան ալ
մնացինք: Ի'նք նախ ինքզինքին թող
նայի և յետոյ ուրիշներուն գործին
խառնուի: Ի'նքի նայէ ով Շահը
Պարսից՝ մոմք ու խուկիդ քեզի, մեր
ժամը մի' դար,

Սապահտոյն ծրագիրը Մաքս
Նորատու կը ջատագովէ: Արդէն
եթէ ծրագիր մը կայ ջատագովուե-
լիք ան ալ իշխան Սապահտոյնին է:

Մարդուն մէկը, կոտորները ոսկե-
զօծեալ ոչխար մը նուիրեր է Ամէն
Բիդայի՝ որ չէ ընդունել: Ապահո-
վաբար Ամէն Բիդա այդ ոչխարը
պիտի ընդունէր, եթէ կոտորները փո-
խանակ ոսկեզօծուած ըլլալու, ոսկե-
ծոյլ ըլլային:

Տիգրանակերտի մէջ կատղեր են
Տաճիկները. Սահմանադրութիւն չեն
ուղեր եղեր: Կ'երեւի փառաւոր ծեծ
մը կ'ուղեն:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՇՈՒ»

ԱՐՏՈՒՄՏԷՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Ռ. ՄԱԳԱՆԱՆ

**ԽԱՍՆԱԳԷՏ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ**

Վկայեալ Բարիկի համալսարանէն, և անձնական առամնաբոյժ եր-
ջանկայիչատակ Մուղաֆէրէտտին Շահին:

Բերա Մեծ Փողոց, ռուսական դեպքանատան դիմաց Սիթէ աը Սիրի,
ուր կը դարմանէ ամէն տեսակ ակուայի, լինտի և բերնի հիւանդութիւններ
վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակուաներ սան քրօշէ է սան
բլաք տասը տարի ապահովութեամբ:

Սոյն դարմանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամե-
նավերջին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործո-
ղութիւնները, պիտի ընդունի, առանց ցաւի և առանց քնացուելու: Դար-
մանատունը Բարիկեան մասնագիտական վերջին սխալէմով, իր տեսակին
մէջ եղական է: Այցելեցէ՛ք և դատեցէ՛ք:

Լաշազոյն Կաղանդէքը

ՇՏԵՄԱՐԱՆ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ

ԳԻՆ 6 ԴԱՀԵԿԱՆ

Կեդրոնացեղի.—Չ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ Ե



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Ե ԱՄԷՆ ՍՐ ԳՈՐԾԱՅԵՆ

ՇՏԵՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀԱՄԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱՀԻՆ

ԳԵՂԵՑԿԱՅԵՆՈՎ ԲԻՆՍԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԴՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ ԵՒ ՄԵՐԸՆ —

ԿԵՂՍ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՁԱՓՈՇԻ

ՍԻՄՈՆ

ԱՌԱՅ ՊԻՍՏՈՒԹԻ

ՕՃԱՌ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԲԱՅԱՐՁԱՎԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

MAYER-ՄԱԵԼԻ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՉՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԳԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ

ԳԻՄԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԵՏԻ ՄՆԱՔ



ՄԱՊԷԻՍ. ՕՇԱՐԱԿԸ



Ապիսի օշարակը լուսազոյն ու առաջնակարգ
դեղն ու դարմանն է հաղի դէմ, ընդունուած և
հաստատուած Եւրոպայի բոլոր մեծամեծ բժիշկնե-
րուն կողմէ և կը գործածուի բոլոր հիւանդանոց-
ներուն մէջ Գործադրութեան եղանակը կը զըր-
կուի դեղին հետ միասին:

Չորս հազարէ աւելի բժիշկներ հաստատած
են այս օշարակը՝ իրր հաղի միակ ու լուսազոյն
դարման:

Կը ծախուի Բերա, Պօն Մարշէ, Գօ օբէրադ-
թիվի Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ ու Գատրգիւղի
մասնաճիւղերուն մէջ, ինչպէս նաեւ բոլոր կարեւոր
դեղավաճառներուն քով:

Ամբողջ Թուրքիոյ համար միակ կեդրոնատե-
ղի-գործակալութիւն՝ Ղալաթիա, Մեծ Միլլէթ խան
թիւ 33:

Գին. Պոլսոյ համար մեծ շիշը՝ 24, պղզ-
տիկ շիշը՝ 13. դաւառներու համար մեծը՝ 30, պղզ-
տիկը՝ 17 զրուշ. թղթաարի ծախքը մեր վրայ:

Գաւառական յանձնարարութիւններու համար պէտք է դիմել ուղ-
ղակի Ղալաթիա, մեծ Միլլէթ խան թիւ 33:

TH. MOURIADÈS

ԲԵՐԱ. ՊՈԼՍԱՐՇԷԻ ԲՈՎ ԹԻԻ 273

ԿՈՇԻԿԻ ՄԵՇ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ'ուզէ՞ք չիք, բարեձեւ և դիմացկուն կօշիկներ հագնիլ, ապագրուած
կամ սպտորաստ, դիմեցէ՛ք վերի հասցէին և հոն պիտի գոհացնեն ձեզի՝
կատարեալ դիւքամառելի պայմաններով:

Ոտք մը առանց գեղեցիկ ու վայելուչ կօշիկի՝ շատ տգեղ բան է,
մանաւանդ կիներուն քով:

Ասկա միտքերնիդ դրէք և դիմեցէք Բերա, Պօնմարշէի քով, թիւ
2.8, Թ. ՄՈՒՐԻԱԴԵՍԻ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՍԹԻԿ

Ձմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները և լաւ
լաստիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահ-
կանադուներու համար:

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք և չնորհքով
մարդիկ էք: Արդ դիմեցէ՛ք, գացէ՛ք առէ՛ք միանասական այն լասթիկները
որոնք շատ քիչ փողացած են և 4 ամիս կառանքիով կը տրուին: Անցեալ
տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շեռպէքէիին խանութը փոքրա-
քանակ, իսկ Աշըր էֆ. խան, Նօ. 27 Պողոսօֆի քով կը ծախուէր մեծա-
քանակ. հիմայ թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ կը ծախուի Պօլիս,
Աշըր էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պողոսօֆի գրասենեակը:

Ո՛վ Մադիկի և Կալիֆոզի ընթերցողներ, վազեցէ՛ք տիար Պողոսօֆի
քով և անպատճառ գնեցէ՛ք հատ մը:

Բերայի յաճախորդաց դիւրութեան համար, մանաւանդ կանանց, սոյն
ապրանքներուն ամէն տեսակներէն կը գտնուի գերձակ Տիար Երուանդ Մի-
րիճանեանի քով, Կալաթիա Սէրայի քովի փողոց թիւ 14 արարթըմանը: